պատճառով, հայոց աշխարհը ամայի է դարձել եւ ուրեմն, Հայաստանում կարող են չլինել կառավարութեան արհեստին հմուտ, ուշիմ եւ արժանաւոր անձինք — նախագահութեան, կուսակալութեան եւ յատկապէս զինուորական պաշտօնների համար: Ուստի մի յատուկ յօդուածով թոյլատրում է, որ հարկ եղած դէպքում, հայոց ազգը կարող է ունենալ «զօրագլուխս, ճարտարապետս, երկրաչափս, թօփխանի գլխաւորս ի ազգէն վրայ, եթէ չգտանի՝ ի ազգէն ռուսաց, եթէ չգտանի՝ ի ազգէն նէմցայից, այսինքն՝ ալմանէ, երիս ամաւ ժամանակաւ, նամակաւ տանուտէրաց հայոց, երդմնեցութեամբ որպէս օրէն է հայոց» (շժ):

Զարմանալի է, որ իրեն լաւ ծանօթ եւ Հնդկաստանում ազդեցութիւն ունեցող ազգերից — ինչպէս են՝ անգլիացիք, ֆրանսացիք եւ հոլլանդացիք — եւ ոչ մէկին չի յանձնարարում:

7. Պաշտօնեաները կոյր եւ հնազանդ մի մեքենայ չեն իրենց պետերի ձեռքում. ամէն մի հրաման ստանալու պարագային՝ նրանք նախ եւ առաջ պիտի մտածեն եւ իմանան, թէ արդեօք հրամանը ընդդէմ չէ՞ օրէնքին, պետութեան շահերին եւ հայոց տանը: Ընդդէմ չլինելու դէպքում միայն կատարում են հնազանդութեամբ եւ անմիջապէս:

Այդ գիտակցական եւ հաւատարիմ հնազանդութիւնը նա պահանջում է եւ զինուորական պետերից, անգամ հասարակ զինուորներից. «Ամենայն զինուոր կարէ արձակել ի վերայ այնմ, որում զօրագլուխ իւր հրամայէ, բայց ի վերայ միաբան տանուտէրաց, տանն հայոց եւ ընդդէմ հրամայեցելոց տանէն հայոց» (մձա, յիբ): Դրան հակառակ, անհնազանդութիւնը եւ ըմբոստացումը ընդդէմ օրինաւոր հրամանների ու կարգադրութիւնների, պատժւում են ամենայն խստութեամբ (ճձդ, ճձզ):

8. Պաշտօնեան հրամայում, գործում եւ կառավարում է միմիայն օրէնքով: Օրէնքը սահմանում է ամէն ինչ եւ ուրեմն այլեւս որեւէ տեղ չի մնում պաշտօնեայի հայեցողութեանը կամ քմահաճոյքին: Ամենաբարձր պաշտօնեան իսկ չի կարող ամենափոքր շեղումն անել օրէնքից կամ մի քայլ անել առանց օրէնքի. «Ամենայն իշխան, որում աստիճանի որ իցէ, եթէ դատեսցէ ոք ինքնակալ կամօք, ընդդէմ օրինաց, անկցի իշխանութենէ եւ դատաստան յանձն առնու ի վերայ իւր ըստ օրինօք» (ճձե):

ԵՐԿՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՒ ՄԻՒՍ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

Ինչպէս արդէն տեսանք, ըստ «Յորդորակի», Հայաստանը բաժանւում է 20 նահանգի, նահանգներն էլ՝ 258 գաւառի: Թէ ի՞նչ սուեաների վրայ է հիմնում այդ թիւերը — դժբախտաբար պարզ չէ:

Գալով «Որոգայթ Փառաց»ին, պէտք է ասենք, որ այդտեղ եւս երկրի բաժանման մասին ոչինչ չենք գտնում,— մի բան, որը սակայն չափազանց կարեւոր է տեղական իշխանութիւնների կազմակերպութեան տեսակէտից:

Մնում է՝ այդ թերին լրացնել ենթադրութիւններով եւ զանազան օրէնքներից հանած եզրակացութիւններով:

Ըստ այդմ՝ Շահամիրեանի Հայաստանը վարչական բաժանման հետեւեալ պատկերն է ներկայացնում.— երկիրը բաժանւում է նահանգների — կամ ինչպէս ինքն է ասում — աշխարհների, նահանգը՝ գաւառների, գաւառը՝ առանձին քաղաքների կամ գիւղերի:

Վարչական իշխանութիւնը — ըստ այդ բաժանման — իր հերթին հետեւեալ աստիճաններն ունի.— կենտրոնական իշխանութիւն, նահանգական իշխանութիւն, գաւառական իշխանութիւն եւ քաղաքային կամ գիւղական իշխանութիւն:

Կենտրոնական իշխանութիւնը գտնւում է երկրի մայրաքաղաքում, նահանգականի կենտրոնն է նահանգական քաղաքը, որը նոյնպէս մայրաքաղաք է կոչւում, բայց նահանգի մայրաքաղաք. գաւառականինը՝ գաւառի քաղաքներից ամենից յարմարը եւ աչքի ընկնողը, իսկ քաղաքայինինը կամ գիւղինը՝ համապատասխան քաղաքը կամ գիւղը:

Նահանգի կամ աշխարհի պետը կոչւում է իշխան, գաւառինը՝ գաւառապետ, քաղաքի-